ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հայկական ասեղնագործության առանձնահատկությունները

Հեղինակ՝ Մարո Ենոքյան

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան/մանկ. գիտ. թեկ.դոցենտ/

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները 4
3. Պատմական ակնարկ ասեղնագործության մասին 5
4. Հին հայկական ասեղնագործության առանձնահատկությունները 6-7
5. Վան-Վասպուրականի ասեղնագործություն 7-8
6. Շիրակ-Կարինի ասեղնագործություն 8
7. Սյունիքի ասեղնագործություն 8-9
8. Արարատյան ասեղնագործություն 9-10
9. Կիլիկիայի ասեղնագործություն 10-11
10. Թիֆլիսի հայկական ասեղնագործություն 11
11. Հայկական զարդանախշեր 12-13
12. Զարդակարերի տեսակները 13-14
13. Եզրակացություն 14-15
14. Դասի պլանավորում 16-18
15. Օգտագործված գրականության ցանկ 19
16. Հավելված 20-25

Ներածություն

Հետազոտական աշխատանքը նվիրված է հայկական ասեղնագործության պատմությանը, զարգացման փուլերին: Ուսումնասիրության մեջ ներկայացրել եմ տարբեր գավառների ու նահանգների ասեղնագործության բնորոշ առանձնահատկությունները, զարդանախշերն ու զարդակարերի տեսակները:

Հայ ժողովրդի մշակույթի բազմաթիվ նմուշներ բացառիկ նշանակություն ունեն համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Մշակույթի գրեթե բոլոր ճյուղերը հայերը կարողացել են յուրացնել և յուրովի մատուցել աշխարհին՝ ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, մանրանկարչություն, կարպետագործություն, գորգագործություն, ասեղնագործություն, նաև ստեղծել սեփականը:

Ասեղնագործությունը դեռևս հին ժամանակներից հայ կնոջ սիրած զբաղմունքն է եղել:

Հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է ուսումնասիերել հայկական ասեղնագործության պատմությունն ու առանձնահատկությունները, կատարման տեխնիկան,բազմազանությունը, բացահայտել ասեղնագործության հետաքրքիր ու բազմազան ոլորտը՝ որպես արհեստի և արվեստի յուրահատուկ ճյուղ: Սովորողների մոտ ձևավորել հետաքրքրասիրություն ու գեղագիտական ճաշակ՝

- Խթանել հետաքրքրասիրությունը ասեղնագործության նկատմամբ
- Հաղորդել գիտելիքներ ասեղնագործության տեսակների մասին
- Ծանոթացնել զարդակարերի ու զարդանախշերի տեսակներին
- Ձևավորել ասեղնագործելու կարողություններ
- Զարգացնել տարածական պատկերացումները
- Դաստիարակել հոգատար, ուշադիր վերաբերմունք, կոկիկ աշխատելու ունակություն:

Սկսելով ասեղնագործել՝ սովորողներն իրենց ազատ ժամանակը կդարձնեն ավելի հագեցած, հետաքրքիր, գունագեղ, արդյունավետ՝ վայելելով հոգու անդորրն ու ստեղծագործ մտքի պայծառությունը:

Պատմական ակնարկ ասեղնագործության մասին

Ասեղնագործությունը դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ է, երբ ասեղով կամ ասեղնագործող մեքենայով զանազան գործվածքների, կաշվի, թաղիքի վրա տարբեր կարատեսակներով ստեղծում են պատկերներ, սյուժետային կոմպոզիցիա, դիմանկար, գործվածք և այլ նյութեր զարդարելու արհեստ՝ասեղի, թելի և մանվածքի կիրառությամբ:[1]

Ասեղնագործության ծագումը շատ հին է:Սկզբում մարդիկ ասեղի փոխարեն օգտագործել են բույսերի փշեր, ձկան ոսկորներ, այնուհետև՝փայտից, փղոսկրից, մետաղից պատրաստած ասեղներ:

Պատմական վաղ ժամանակներից սկսել են գործել ոսկյա թելերով:Հին աշխարհում ասեղնագործությամբ զբաղվել են ասորեստանցիները, հրեաները, պարսիկները, հույները, հռոմեացիները:Առավել հայտնի կենտրոն է եղել Բաբելոնը:Ամենահին նմուշների մասին գաղափար են տալիս ասուրա-բաբելական արձանների, եգիպտական քանդակների, որմնանկարների, հունական սափորների վրա պատկերված հագուստների զարդարանքները, հնագիտակ պեղումներով հայտնաբերված ասեղնագործ պատառիկները:

Ասեղնագործությունը տարածված է եղել ամբողջ աշխարհում:Չինաստանում ասեղնագործված աշխատանքները թվագրվում են Ք.ա. 5-3-րդ դարեր:

Հին հունական դիցաբանության մեջ ասեղնագործությունը, ինչպես նաև ջուլիակագործությունը վերագրվում են Աթենաս աստվածուհուն, որն արտացոլվում է նրա և մահկանացու Արաչնեի հայտնի մրցույթի պատկերագրության մեջ:

[1]Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 1, Երևան 1974, էջ 555-556

Հին հայկական ասեղնագործության առանձնահատկությունները

Հին հայկական ասեղնագործության զարգացման բարձր աստիճանի մասին են վկայում մատենագրական տվյալները՝Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի և ուրիշներ:

Հին Հայաստանում ասեղնագործությունը ավելի տարածված է եղել , քան գորգագործությունը: Միջին դարերից պահպանվել են ասեղնագործ պատառիկներ, ձեռագործ կազմաստառներ, զգեստներ, ծածկոցների մնացորդներ, եկեղեցական ասեղնագործ զարդարանքներ:

Ասեղնագործությունը տարածված է եղել հայկական բոլոր շրջաններում՝ կենտրոնանալով Վան-Վասպուրականի, Շիրակ-Կարինի, Սյունիք-Արցախի, Արարատյան երկրի, Կիլիկիայի և հայ մշակույթի երկու խոշոր կենտրոնների՝Թիֆլիսի և Կոստանդնուպոլսի:

Պահպանելով ազգային միասնական ոճը՝ ամեն մի դպրոց զարգացրել է ասեղնագործության իր ձևերն ու տեսակները:

Հայկական ասեղնագործությունը հիմնականում զարգացել է երեք խոշոր ճյուղերով.

1.ժողովրդական –կապված գեղջկական տարազի և կենցաղի հետ,

2.քաղաքային-առևտրա-արհեստավորական,

3.եկեղեցական:

Հայկական ժողովրդական արվեստում հատուկ տեղ է գրավում ասեղնագործությունը:Զարդանկարային, պատկերագրական կապ ունենալով մյուս ճյուղերի հետ՝ ասեղնագործությունն աչքի է ընկնում բազմազան կարատեսակներով:Այն հարուստ է որպես հիմք օգտագործվող նյութերով՝ կաշի, կտավ, մետաքս, դիպակ և այլն, ինչպես նաև գործածվող տարբեր հաստության և որակի թելերով՝բրդյա, բամբակյա, վուշե, մետաքսե, արծաթաթել և ոսկեթել:Սկսած 5-րդ դարից՝պահպանվել են նկարագրություններ, վկայություններ շքեղ հանդերձանքի, եկեղեցական զարդարանքների մասին, որոնց մեծ մասը ծածկված է եղել ասեղնագործությամբ:

Թագավորական և իշխանական տներում կանայք ասեղնագործել են:Ըստ մատենագիրների՝ գերի ընկած կանայք իրենց ապրուստի միջոցը հայթայթում էին ասեղնագործությամբ:

Ճարտարապետ Թորոս Թորամանյանը 7-րդ դարը համարում է հայկական արվեստի նոր վերածննդի դար: Կառուցվում են ճարտարապետական կոթողներ, որոնք ներսից զարդարվում են թանկարժեք գործվածքներով, վարագույրներով, շքեղ հանդերձանքով: Դրանց մեծ մասը ծածկվել է ոսկեթել, մետաքսաթել, գոհարազարդ ասեղնագործություններով:

Այդ դարի մատենագիրները՝Սեբեոսը, Անանիա Շիրակացին տեղեկություններ ունեն թանկարժեք զարդարանքների մասին:

Միջնադարի բանաստեղծները նույնպես գովերգում են շքեղ զարդարանքները, ոսկեթել ասեղնագործությունները:

12-րդ դարի բանաստեղծ Ներսես Շնորհալու մոտ ևս շատ կարևոր տվյալներ կան ասեղնագործ զարդարանքների մասին:

Ասեղնագործ արվեստի կարևոր աղբյուր են նաև ձեռագրերի մանրանկարները, որոնք հանդիպում են ինչպես գորգարվեստում, այնպես էլ ասեղնագործության մեջ:

Հայկական ասեղնագործությունները երբեմն հիշեցնում են նախշազարդ կերպասի կամ ոսկերչական նուրբ գործեր: Հին կարերը հին նախշերի հետ միասին հայկական տարազի մեջ կենդանի մնացին մինչև 20-րդ դարի առաջին քառորդը:

Վան-Վասպուրականի ասեղնագործություն

Վանը հայտնի է եղել տարբեր ասեղնակարերով:Վանի կարը հայերը տարածել են տարբեր երկրներում՝Կիլիկիա, Կոստանդնուպոլիս, Մերձավոր արևելք:

Վանը նշանավոր է եղել նաև ժանյակի տեսակներով: Նուրբ ժանյակներում պահպանվել են տիեզերքի բուսական և կենդանական, երկրաչափական հնագույն զարդամոտիվներ: Վան-Վասպուրականից պահպանվել են սփռոցներ, վարագույներ, գորգեր, վանքերի ձեռագործ աշխատանքներ, որոնք պահվում են Էջմիածնի, Երևանի պետական թանգարանի և պատկերասրահի ֆոնդերում:

Վան-Վասպուրականում զարդակարվել են հագուստը, վզնոց-մանյակները, գրկափակերը, ճարմանդները, գոգնոցները, մեզարները: (նկ. 1)

Տղամարդու հագուստը ևս ասեղնագործ մասեր է ունեցել:

Ասեղնագործության պահպանված նմուշներում շատ են Կենաց ծառի պատկերները: 20-րդ դարասկզբին տարածված են եղել հայրենասիրական, պատմական տեսարաններով ասեղնագործություններ: Օրինակ՝<< ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ>>, <<ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԸ>>, <<ԱՂԹԱՄԱՐ>> ....ՈՒշագրավ է ասեղնագործած Արծրունի թագավորական դրոշը:

Շիրակ-Կարինի ասեղնագործություն

Շիրակ-Կարինի ասեղնագործության ամենահին նմուշները 10-13-րդ դարերի են: Դրանցից են Անիի պեղումների ընթացքում Նիկողայոս Մառի կողմից հայտնաբերած Տիգրան Հոնենցի ազգականուհու դամբարանի հագուստները, բարձն ու ծածկոցը և այլ նմուշներ:ՈՒշադրության են արժանի Մատենադարանում պահպանվող ձեռագրերի մանրանկարները:Կազմի աստառի փոխարեն կիրառված ասեղնագործ կտորներին պատկերված են Կենաց ծառեր, բուսական զարդանկարներ:

Մեծ է ասեղնագործ սրբիչների թիվը, ոչ մի սրբիչի նախշազարդ չի կրկնվում: Պահպանվել են նաև մետաքսե քսակների նմուշներ, եկեղեցական վարագույր: (նկ. 2)

Սյունիքի ասեղնագործություն

Սյունիքի ասեղնագործության դպրոցն ընդգրկում է Զանգեզուրի, Սիսիանի, Գորիսի, Կապանի շրջանները:Պահպանված ամենահին նմուշները 17-րդ դարից են: Աշխատանքները արվել են ոսկեթելով, նախշազարդ են, մարգարտաշար, գոհարներով ընդելուզված: Ասեղնագործվել է տարազի փողքակապը, շապիկի կուրծքը, ճակտնոցը: Կենցաղային իրերից գեղեցիկ ասեղնագործել են վարագույներ, բարձեր, սրբիչներ, սփռոցներ: Սրբիչները ասեղնագործվել են սպիտակ ու գունավոր թելերով, հարթակարով և թելքաշով:

Տարածված է եղել Կենաց ծառի Տ-աձև նախշը և խաչաձև կարը: Ասեղնագործվել են նաև գդալամաններ, հարսի անկյունը զարդարող կերպասե վարագույրի գլուխը, ձու- հմայիլը, աղջիկների, նորահարսի չմուշկ-ոտնամանները:

Սյունիքում կիրառել են տարբեր կարատեսակներ՝շուլալ, հարթակար, շղթայակար, խաչկար:Կան նաև ծխամորճի, լամպի ապակու պատյաններ, որոնք ասեղնագործ են՝ ուլունքներով զարդարված:

Սյունիքը հայտնի է վերդիր ասեղնագործությամբ: Մի երանգի կտորին զարդակարերով ամրացվում է ուրիշ կտորից կտրած նախշեր:

1651 թվականին Փիլիպոս կաթողիկոսին նվիրել են մի արծվագորգ, որն ասեղնագործել է Ոսկան քահանան: Ոսկե և արծաթաթելով ասեղնագործված է մեծ արծիվ, երկու կողմերում խաչաձև գմբեթներ, վերևում՝երկնային լուսատուներ՝մարդու պատկերով:

ՈՒշագրավ են նաև վանքերի ասեղնագործ վարագույրները: Տաթևի վանքում պահպանված է եղել Գ. Տաթևացու քրոջ կատարած ասեղնագործության նմուշ:

(նկ. 3)

Արարատյան ասեղնագործություն

Արարատյան ասեղնագործությունն ունի հին պատմություն և զարգացած ավանդույթներ: Արդեն 19-20-րդ դարերում ասեղնագործվել է ճակտնոցը, թավշե մուշտակը, կրծկալը, սպիտակեղենը, բազմոցի գլանաձև բարձերը: Ասեղնագործել են ոսկեթելով և մետաքսաթելով, զուգահեռ կիրառվել է նաև ուլունքազարդում: Անկրկնելի են ասեղնագործած սրբիչները, սփռոցները, վարագույրները, թաշկինակները, քսակները: Արարատյան դաշտի ասեղնագործ իրերը զարդարված են ոսկեթելով, մարգարիտե հուլունքներով:[2]

Մատենադարանում պահվում է մի ձեռագիր, որն ընդօրինակված է 1684 թվականին: Այն ունի ատլասից պատյան: Գրաշապիկը մետաքսե սև ատլասից է ոսկեմանյալ թելով՝կլապիտոնով ասեղնագործած, մարգարիտով զարդարուն, երկտակ և երեքտակ հարթակարով: Էջմիածնի արծվագորգերը ասեղնագործվել են մետաքսե թելերով, ուռուցիկ հարթակարով:

[2]Կարինե Պապիկյան, Հայկական ասեղնագործություն, Երևան 2002

Բազմաթիվ են եկեղեցական հանդերձների, շուրջառների, խույրերի ասեղնագործ նմուշները: Ամենահին խույրերից է Խաչատուր կաթողիկոսի խույրը՝ 16-րդ դար: Մի երեսին Մարիամն է՝ մանուկ Հիսուսին գրկած, մյուսն՝ Քրիստոսը՝ խաչված: Ոսկեթել ասեղնագործ մակերեսը պատված է արծաթե թելով արված զարդանախշով, ակներով զարդարուն, վրան կա խոշոր բյուրեղ և հինգ հակինթ:

Կիլիկիայի ասեղնագործություն

Ձեռագործ արվեստը Կիլիկիայում տարածված է եղել շատ հին ժամանակներից: Թագավորության անկումից հետո ևս հայերը շարունակել են պահպանել արվեստը, արհեստն ու մշակույթը:

19-րդ դարում Կիլիկիայում ասեղնագործությունը եղել է զարգացման բարձր աստիճանի արվեստի տեսակ: Կիլիկիայի յուրաքանչյուր բնակավայր ունեցել է իրեն հատուկ կարատեսակը՝ Այնթապի կար, Մարաշի կար, ՈՒրֆայի կար, Սվազի կար, Ռուբինյաց կար, Տարսոնի կար:

Ամենանուրբ ասեղնագործությունը արվել է Այնթապի ճերմակ թելով, թափանցիկ կտորի վրա՝ թելքաշ, համրովի, գծային հարթակարով: ՈՒրֆայի ասեղնագործությունը արվել է մանիսա կտորին՝ ոսկեթելով, մետաքսաթելով: Նախշը եզրակարել են ոսկե կամ մետաքսե թելով, թելքաշ հարթակարերով: ՈՒրֆայի ասեղնագործությունը իր ուրույն տեղն է թողել ժամանակակից հայկական ասեղնագործության վրա:

Կիլիկիայի կարն արվում է այնպես, որ երկու գույնի թելերից մեկի լեզվակները մտնեն մյուս գույնի թելի դաշտ: Կութերը մանր են ու խիտ:

Այնթապում և ՈՒրֆայում ծաղկուն է եղել ժանյակագործության արվեստը:(նկ. 4)

Սեբաստիայում տարածված է եղել ասեղնագործությունը՝շուլալ կարով և թեք հարթակարով: Ասեղնագործվել են երիտասարդ կանանց գուլպաներ, գոգնոցներ: Տարսոնի կարը թափանցիկ կտորին արված մետաքսաթելի լիցք է:
Ձեյթունի կարը կոչվել է կութ-ասեղ:Գործող թելը նախշը լցնում է կտորի վրա, թելերը

կպնում են միմյանց երեսի կողմից: Կութերը կարճ ու երկար են, մակերեսը ստացվում է ուռուցիկ:

Մարաշի կարն ուեցել է մի քանի տարբերակ, մեկն արվել է հարթակար՝ կութ-ասեղի տեխնիկայով, մյուսը հյուսվածք կարն է: Սա գաղտնակար է: Գործող թելն ունի անցումների կարգ, որը գիտի միայն ասեղնագործողը: Կիրառում են բրդե, բամբակյա, մետաքսե, նաև ոսկյա ոլորուն թելեր: Զարդանկարներում տարածված են թռչունները, բույսերը, կենդանիները:(նկ. 6)

Կեսարիայի կարը շատ նուրբ է: Մաղակարը արվել է թափանցիկ կտորին ոսկե և մետաքսե թելերով, խիտ կար է:

Թիֆլիսի հայկական ասեղնագործություն

Թիֆլիսում նույնպես հայկական արվեստն ու մշակույթը շատ տարածված են եղել: Մինչև 20-րդ դարի առաջին կեսը Թիֆլիսում գործել է հայկական կուսանոց, որտեղ աղջիկները զբաղվել են ձեռագործով:

Թիֆլիսի հայ ասեղնագործ վարպետները մասնագիտացված էին սպիտակեղենի, կենցաղային իրերի, վարագույրների, սփռոցների և այլնի ասեղնագործության մեջ: 1915 թվականից հետո Թիֆլիսում հաստատված հայ գաղթականները իրենց հետ բերել էին հարուստ մշակութային ավանդույթներ, հատկապես ժանյակագործական արվեստը:

Հայկական զարդանախշեր

Մշակույթի յուրաքանչյուր բնագավառ տվյալ ժողովրդի կյանքի, մտածողության յուրովի վերարտադրություն է: Հայկական ասեղնագործության արվեստի դարավոր ավանդներն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, գեղարվեստական և ստեղծագործական ինքնատիպությունը: Հայ ժողովուրդը ստեղծալ է իր զարդարանքը, որպես պատմականորեն անհրաժեշտ ու անխուսափելի հետևանք՝ իր կյանքի պայքարի ու մտածողության: Այդ զարդանախշերը, որոնք ծնունդ են առել նախնադարյան հասարակարգում, տարբեր դարերում, տարբեր դասակարգերի կողմից, տարբեր իմաստ ու տարբեր նշանակություն են ունեցել:

Ինչպես դեկորատիվ-կիրառական արվեստի մյուս ճյուղերում, այնպես էլ ասեղնագործ արվեստում հանդիպում են երկրաչափական, բուսական, կենդանական, ինչպես նաև երկնային մարմինների երևակայական ձևերի պարզ և բարդ բովանդակություն ունեցող զարդանախշեր, պատկերագրություններ:

Երկրաչափական զարդանախշերի մեջ հաճախ են հանդիպում շրջանագիծը՝որպես պտուղների և սերմերի դրսևորման ձև: Այն որպես կապի գաղափար, արտահայտում է բնության չորս տարրերի միասնությունը: Չորս տարրերի հետ են կապվում նաև մյուս երկրաչափական նախշերը՝ քառակուսին, շեղանկյունը, քառաթև զանազան նախշեր, այդ թվում նաև խաչը: Խաչի ծագման առթիվ բազմաթիվ բացատրություններ կան: Խաչը գոյություն է ունեցել Քրիստոսից առաջ՝իբրև սրբազան նշան: Այն դարձավ նոր հավատի գաղափարների խորհրդանշանը:

Հայկական զարդանախշերի մեջ բուսական զարդանախշերը գրավում են ամենագլխավոր տեղը, քանի որ բուսական աշխարհը մարդու կյանքում մեծ տեղ է գրավում: Բուսական մոտիվների գլխավոր արտահայտությունը Կենաց ծառն է:

Բնաշխարհի հարստությունը կազմող ծառերը, ծաղիկները, մրգերը՝ նուռ, խաղող, խնձոր, որպես սիրո, պտղաբերության, անմահության գաղափար, կենսախինդ արևով են ողողում ամեն մի ասեղնագործ զարդարանք:

Հայկական ընտանիքներում բուսական զարդանախշերով հաճախ զարդարում էին ծածկոցները, բարձի երեսները, սփռոցները, ինչպես նաև հայերեն այբուբենի տառերը:

Վայրի գիշատիչ և ընտանի կենդանիներով պատկերված զարդանախշերը ունեն իրենց յուրահատուկ մեկնաբանությունը: Օրինակ՝առյուծը խորհրդանշում է ուժ, հզորություն, արիություն, եզը՝ համբերություն: Զարդանախշերում եղնիկների, խոյերի, աղվեսների հետ երևան են գալիս նաև կրիաներ, արջեր, նապաստակներ:

Ասեղնագործության մեջ ավելի հաճախ օգտագործվում են թռչնազարդերը: Աղավնին խորհրդանշում է խաղաղություն, մաքրություն, արծիվը՝ վեհություն:

Թռչնային զույգերը պատկերվում էին ոչ միայն կտուցների, պոչերի միացումով, այլև պարանոցների միահյուսմամբ:

Ասեղնակարերի տեսակները

Հայկական ասեղնագործությունը բնութագրվում է ավանդական կարատեսակների բազմազանությամբ, որոնցից մի քանիսը ստացել են ծագման , ինչպես նաև տարածման շրջանների կամ քաղաքների անունները՝ Վանի, Մարաշի, Այնթապի, ՈՒրֆայի ..... Դրանցից շատերը հանդիպում են Հայաստանի այլ շրջաններում, գաղթօջախներում: Տարբեր բնակավայրերում ինչպես տարբեր են զարդանախշերը, այնպես էլ տարբեր են զարդակարերի տեսակները:

Մատենադարանում ցուցադրվում են նմուշներ, որոնց ուսումնասրիությունը փաստում է հայկական ասեղնակարերի բազմազանության մասին:

Ասեղնակարերի տեսակներից առավել տարածված են շղթայակարը, օղակարը, վրակար-կողքակարը, խաչմերուկ կարը, խաչկարը, շյուղակարը, թելքաշ կարը, որի դեպքում կտորից քաշած- հանած թելերի տեղը այլ թելերով են նախշում:

Վրադիր կարի դեպքում մեծ կտորի վրա այլ կտորներից նախշեր են արվում:

Հարթակարն ունի իր տեսակները՝

-լիցք - կտորի մակերեսը լցնում են նախշերով,

-համրովի - գործող թելը կտորի մակերեսը ծածկում է կտորի թելերի հաշվով:

Տարբեր վայրերի ասեղնագործողներ կիրառել են տարբեր կարատեսակներ:

Այնթապի ճերմակ ասեղնագործության մեջ նախշերն արել են թելքաշով՝ համրովի ու գծային հարթակարով:

Մարաշի ասեղնագործության հարթակարը կոչվում կոթ-ասեղ, կտորի կութերը անհավասար են, նախշը ծածկում են կտորի վրայից՝ գործող թելով կտորից մի քանի թել վերցնելով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՅՐՍ ԻՆՁ ԱՍԱՑ, -ԱՐՀԵՍՏԻ ԳՆԱ, ԱՐՀԵՍՏ ՍՈՎՈՐԻՐ, ՄԻ՛ ԼԻՆԻՐ ՆԱԶՈՒԿ, ԱՐՀԵՍՏՆ Է ՄԱՐԴՈՒՆ ՈՍԿԻ ԲԻԼԱԶՈՒԿ»: — ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Ուսումնասիրելով հայկական ասեղնագործության առանձնահատկությունները հանգեցի այն եզրակացության, որ անհրաժեշտ է մշտապես զբաղվել ինքնակրթությամբ, կատարելագործել մասնագիտական կարողությունները, խորությամբ ուսումնասիրել մեր պատմության ազգային արժեքները, հատկապես դեկորատիվ –կիրառական արվեստի ճյուղերը, սովորողների մոտ սեր առաջացնել դեպի մեր ազգային հարստությունը:

Սիրել, գնահատել, պահպանել, կիրառել և փոխանցել այն սերնդեսերունդ: Իմ կարծիքով լավագույն տարբերակը խմբակների ձևավորումն է : Հոգատար և հետևողական աշխատանքը, հաճախակի այցելությունները թանգարաններ կտան իրենց դրական արդյունքը:

Անհրաժեշտ է կիրառել ՏՀՏ գործիքներ նյութի յուրացումը առավել հետաքրքիր, բովանդակալից և արդյունավետ դարձնելու համար:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, որ ստեղծվի բարենպաստ պայմաններ, համապատասխան միջավայր և դրական տրամադրվածություն:

Ինքս ասեղնագործում եմ, շատ մեծ բավականություն եմ ստանում իմ կատարած աշխատանքից, սիրով և համբերատարությամբ սովորեցնում եմ ցանկացողներին: Նախկինում ունեցած ասեղնագործության խմբակիս աղջիկները ասեղնագործում էին կոկիկ, գեղեցիկ, նուրբ, սիրով և մեծ պատասխանատվությամբ:
Ահա նրանց աշխատանքների հավաքածուն: (նկ. 7)

Հաջորդիվ ներկայացնում եմ իմ ձեռքի աշխատանքները: (նկ. 8)

Մշակութային ժառանգության պահպանման խնդիրը խիստ արդիական է:Աշխարհում կատարվող փոփոխություններն ավելի են արագացնում ազգային շատ արժեքների դուրսմղումը կիրառությունից:Անհրաժեշտ է խնամքով վերաբերվել ազգային արժեքների պահպանմանը: Ցավալի է, բայց փաստ, որ պատշաճ ուշադրություն չի դարձվում մշակութային արժեքների պահպանմանը՝ինչպիսիք են ասեղնագործությունը, ժանյակագործությունը, ջուլիակագործությունը.....

Ժամանակի ընթացքում փոխվել է վերաբերմունքը ասեղնագործության նկատմամբ, սակայն ամենևին չի վերացել: Ճաշակով և նուրբ ասեղնագործած իրերը հաճախ դառնում են արվեստի ստեղծագործություններ:

Սիրենք, պահպանենք, տեր կանգնենք մեր ազգային արժեքներին, մշակութային հարուստ ու բազմադարյա ժառանգությանը:

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

7.10.2023 թ

Առարկա՝ տեխնոլոգիա

Դասարան՝ 6-րդ

Ուսուցիչ՝ Մարո Ենոքյան

Թեման՝ Տեղեկություններ ասեղնագործության մասին:

Նպատակը՝ Կարևորել ազգային մշակույթի դերը սովորողների կյանքում: Հաղորդել գիտելիքներ ասեղնագործության մասին, ծանոթացնել զարդակարերի ու զարդանախշերի տեսակներին: Զարգացնել սովորողի ստեղծագործական ունակությունները, անհատական և խմբերով աշխատելու կարողունակություն: Ձևավորել գեղագիտական ճաշակ:

Խնդիրները՝ Ձևավորել պատկերացումները հայ ժողովրդի մշակույթի, դեկորատիվ –կիրառական արվեստի տեսակների և նշանակության մասին:

Մեթոդները՝ Բացատրական, ցուցադրական, ինտերակտիվ ուսուցման, որոնողական, մտագրոհի:

Կահավորումը՝ Դասագիրք, համակարգիչ:

Օգտագործվող նյութերը՝ Պաստառներ, նկարներ, հայկական զարդանախշերի հավաքածու:

Միջառարկայական կապեր՝ Պատմություն, բնագրտություն, կերպարվեստ:

Վերջնարդյունքը՝ սովորողը կիմանա հայկական ասեղնագործության առանձնահատկությունները, զարդանախշերի ու զարդակարերի տեսակները:

Կարողանա տարբերել տարբեր շրջանների զարդակարերի տեսակները:

Տիրապետի ասեղնագործության տեխնիկային:

Ընթացքը՝ Մտագրոհի միջոցով պարզել, թե դեկորատիվ-կիրառական արվեստի որ ճյուղերին են ծանոթ սովորողները,լրացնել, ավելացնել:



Ապա յուրաքանչյուր սովորող ներկայացնում է իր հավաքագրած տեղեկությունը ասեղնագործության մասին և պատրաստած նկար-պաստառները:

Իմաստի ընկալում՝	Հաղորդել գիտելիքներ ասեղնագործության բազմադարյան պատմությունից: Սահիկաշարի միջոցով ցուցադրել ասեղնագործության նմուշներ: Ասեղնագործությունը բնորոշել որպես ժողովրդի հանճարի և արարող ձեռքի վկայություն: Ընդգծել ասեղնագործության դերն ու նշանակությունը ոչ միայն գեղագիտության մեջ, այլև կարևորել համաշխարհային դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանում: Սովորողներին ներկայացնել ասեղնագործության զարգացման ուղիներն ու ժամանակակից արվեստի կատարելագործումը՝ պահպանելով ազգային արժեքները:
Ամփոփում՝	Կատարել համեմատություն հին և ժամանակակից ասեղնագործությունների միջև, օգտվել Т-աձև աղյուսակից:
Գնահատում՝	Գնահատել սովորողներին ըստ հավաքագրած տեղեկությունների, պատրաստած նկար-պաստառների:
Տնային առաջադրանք՝	Ուսումնասիրել հայկական ասեղնագործության զարդանախշերը, զարդակարերի կատարման տեխնիկան:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 1Երևան 1974
- Ս. Դավթյան, Հակական ասեղնագործությունԵրևան 1985
- Ա. Մարաբյան, ԱսեղնագործությունԵրևան 1985
- Կարինե Պապիկյան, Ժ ԱվետիսյանՀայկական ասեղնագործություն: Ուս. ձեռնարկ2002
- Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք,Երևան 2015
- Ժ. Ավետիսյան, Տեխնոլոգիա 5-7-րդ դասարանների ուսուցչի մեթոդական ձեռնարկ
- https://hy.wikipedia.org/wiki/Հայկական_ասեղնագործություն
- https://hy.wikipedia.org/wiki/Մարաշի_ասեղնագործություն

Հավելված



Նկար 1՝ Վան-Վասպուրականի ասեղնագործություն



- Նկար 2՝ Շիրակ-Կարինի ասեղնագործություն

- Նկար 3՝ Սյունիքի ասեղնագործություն

- Նկար 4՝ Կիլիկիայի ասեղնագործություն

- Նկար 5՝ Ուրֆայի ասեղնագործություն

- Նկար 6՝ Մարաշի ասեղնագործություն

- Նկար 7՝ Խմբակի ձեռքի աշխատանքներ

- Նկար 8՝ Իմ ձեռքի աշխատանքները